Г.Н. АРЕВШАТЯН, И.А. ОВСЕПЯН

ПОДХОДЫ К ОЦЕНКЕ КРЕДИТНЫХ РИСКОВ БАЗЕЛЬСКОГО КОМИТЕТА ПО БАНКОВСКОМУ НАДЗОРУ

Рассматриваются разработки международных подходов к оценке кредитных рисков Базельского комитета по банковскому надзору. Выявлены существующие проблемы кредитного риска и представлены перспективы их преодоления.

Определены текущее состояние и подходы Центрального банка РА в этих процессах.

Ключевые слова: кредитный риск, достаточность капитала, контрциклический порог капитала.

G.N. AREVSHATYAN, I.A. HOVSEPYAN

APPROACHES OF THE BANKING CONTROL BASEL COMMITTEE TO THE CREDIT RISK ASSESSMENT

The developments of international credit risk assessment approaches of the Basel Committee on Banking Supervision are considered. The current problems of credit risk are identified and the prospects for overcoming them are presented.

The current situation in Armenia, and the approaches of the central bank in these processes are also determined.

Keywords: credit risk, capital adequacy, countercyclical capital threshold.

ՀՏԴ 339.13: 621.315.2

Ս.Մ. ԲԱԽՇՅԱՆ, Ս.Ա. ՄԿՐՏՉՅԱՆ, Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՊՂՆՁԻ ՀԵՆՔՈՎ ՄԱԼՈՒԽԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հայաստանն ունի բոլոր իրական նախադրյալները՝ պղնձի սեփական արտադրության պարագայում դառնալու մալուխի միջազգային շուկայում տարածաշրջանի հիմնական արտադրողն ու արտահանողը՝ իր միկրո և մակրո տնտեսական արդյունքներով: Հոդվածում վերլուծության են ենթարկվում հայրենական մալուխի շուկայի առկա իրավիճակը, ներկայումս հայաստանյան շուկայի խոշորագույն մալուխային ընկերության՝ «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի արտադրատնտեսական գործունեությունը և շուկայի զարգացման հեռանկարները:

Առանցքային բառեր. պղնձի արտադրություն, մալուխի արտադրություն, արտահանման շուկաներ, կայուն զարգացում:

Ներկայումս Հայաստանը տիրապետում է պղնձի համաշխարհային պաշարների 1%-ին՝ 8 մլն տ [1], իսկ պղինձ արտադրող 56 երկրների ցանկում գրավում է 25-րդ տեղը՝ 83291 տոննա ցուցանիշով կամ 0,4% մասնաբաժնով [2]: Սա-

կայն հարկ է նշել այն մտահոգիչ փաստը, որ մաքուր պղնձի և դրանից պատրաստվող բարձրարժեք արտադրատեսակների փոխարեն պղնձի արտադրության շրջափուլը ներկայումս երկրում ավարտվում է պղնձի խտանյութի արտադրությամբ և արտահանմամբ՝ չօգտագործելով այս ոլորտում համեմատական առավելությունը և արդյունքում երկիրը զրկելով մակրո և միկրո տնտեսական ցուցանիշների պոտենցիալ աճից: Այսպես, 2020թ-ին երկրից արտահանվել է 509 814,7 տոննա պղնձի հանքաքար և խտանյութ՝ 604411,40 հազ. ԱՄՆ դոլար մաքսային արժեքով, իսկ 2021թ-ին՝ 429 483,2 տոննա և 769 257,8 հազ. ԱՄՆ դոլար համապատասխանաբար [3]:

Արտադրության և արտահանման կառուցվածքում հումքի փոխարեն վերջնարդյունք ստանալու երկրի ծրագրերից մեկը կաթոդային պղնձի արտադրության կազմակերպումն է: ՀՀ կառավարությունը և ոլորտը կարգավորող կառույցներն աշխատում են Հայաստանում տարեկան 100.000 տոննա կաթոդային պղնձի արտադրություն կազմակերպելու ծրագրի նպաստման շուրջ, որն ունի ներդրումային գրավչություն և իրականացման ռեսուրսային հնարավորություններ [4]: Պղնձի հայրենական արտադրության կազմակերպումը հնարավորություն կստեղծի դրա հենքով այն արտադրությունների զարգացման համար, որոնք ներկայումս հումքը ներմուծում են կամ իրականացնում են պղնձի ջարդոնի վերամշակում: Այդպիսի արտադրությունների շարքում իր նշանակությամբ և հայրենական շուկայում ունեցած դիրքով առաջատար է մալուխի արտադրությունը:

Այն իրական նախադրյալները, որ միջազգային շուկայում պղնձից պատրաստված արտադրանքի կառուցվածքում ներկայումս գերակշռում են մալուխները և հաղորդալարերը՝ 58% (նկ. 1), ինչպես նաև պղնձից պատրաստված այս արտադրատեսակի նկատմամբ համաշխարհային պահանջարկի շարունակական աճը՝ պայմանավորված առաջին հերթին կապի (5G ինտերնետ) և էլեկտրացանցային ենթակառուցվածքների ոլորտի պահանջարկով, հիմք է տալիս մեզ՝ հիմնավորելու այն հանգամանքը, որ հայրենական պղնձի արտադրության կազմակերպումը իրատեսական կդարձնի Հայաստանում մալուխի շուկան դարձնել արտահանման հիմնական հոդվածներից մեկը:

Խորհրդային տարիներին, երբ Հայաստանում՝ Ալավերդու պղնձաձուլարանում, ձուլել են մաքուր մետաղ, դրա բազայի վրա Երևանում գործել է մալուխի արտադրություն: ԽՍՀՄ փլուզումից հետո Երևանի մալուխի գործարանը գրեթե չի աշխատել: Ներկայումս գործում են մալուխի արտադրության միջին և մի քանի փոքր ձեռնարկություններ, որի արդյունքում երկրում ստեղծվել է 150-ից ավելի աշխատատեղ: Այդ ձեռնարկություններն աշխատում են ներկրվող պղնձով, բայց վերամշակման համար ընդունում են նաև մետաղի ջարդոն, որի արդյունքում

պղնձի ջարդոնի արտահանումը գրեթե երկու անգամ կրճատվել է: Նշված գործընթացին նպաստել են նաև արտահանման տուրքերը, որոնք գործում են սև և գունավոր մետաղի ջարդոնի համար: Այս օրինակը ցույց է տալիս այն փաստը, որ հարկային քաղաքականությունը հաջողությամբ ծառայում է որպես տնտեսական մեխանիզմ՝ ցանկալի տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար:



Նկ. 1. Պղնձից պատրաստված արտադրանքի կառուցվածքն աշխարհում [5]

10-15 տարի առաջ Հայաստանը մալուխի նկատմամբ իր պահանջարկը գրեթե ամբողջությամբ բավարարում էր ներկրման հաշվին: Ներկայումս կենցաղային էլէկտրահաղորդալարերի ցանցը գրեթե ամբողջությանբ բավարարվում է հայրենական արտադրության հաշվին, սակայն բարձր լարման տեսակի մալուխները շարունակում են ներկրվել: Երկրում արտադրվող հաղորդալարերի արտադրության ծավալները դինամիկ աճում են, իսկ կորոնավիրուսային համաճարակի ավարտից հետո համաշխարհային տնտեսության և այդ թվում՝ Հայաստանի տնտեսական աշխուժացման պայմաններում 2021թ. հաղորդալարերի արտադրության ծավալներում գրանցվել է ավելի քան երկու անգամ աճ՝ 667 տոննա, որը պատմականորեն գրանցված ամենաբարձր ցուցանիշն է (նկ. 2):



Նկ. 2. Հաղորդալարերի (փաթույթային) արտադրության ծավալները ՀՀ-ում 2017-2021թթ. [6]

Ներկայումս հայաստանյան շուկայի խոշորագույն մալուխային ընկերությունը «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ն է, որի արտադրության մեծ մասը սպառվում է ներքին շուկայում: «ԻՆ-ՎԻ» ՍՊ ընկերությունը հիմնադրվել է 2011թ-ին: ***Ընկերության առաքելությունն է էլեկտրական լարերի և մալուխների արտադրության բնագավառում զարկ տալ ներքին արտադրությանը՝ ի հակակշիռ ներկրմանը, ինչպես նաև վերականգնել հայրենական արդյունաբերության ավանդույթները*** [7]:

Մեկնարկելով փոքրիկ տարածքում՝ մի քանի հաստոցներով արտադրելով սահմանափակ տեսականիով էլեկտրական լարեր, այսօր «ԻՆ-ՎԻ» ընկերությունն ընդլայնել է տեխնիկական պարկը, որտեղ գործում են ձուլման միջոցով պղնձե և այլումինե լարերի ստացման, դրանց ձգման, ոլորման, պոլիվինիլքլորիդային նյութի արտադրման, հաղորդալարի մեկուսացման արտադրամասերը: Ընկերությունում աշխատում են 70-ից ավելի աշխատակիցներ, հաստոցային պարկը համալրված է գերմանական, ռուսական և չինական արդիական տեխնոլոգիաներով: ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ն ակտիվ համագործակցում է այս բնագավառում տեխնոլոգիաներ արտադրող համաշխարհային առաջատար ընկերությունների հետ, ինչպիսիք են՝ Bafeh Sim Golestan–ընկերությունը (Իրան), ՕԱՕ «Уральская Горно-Металлургическая Компания» / УГМК /-ՌԴ, MAX HONG KONG INDUSTRY CO.-Չինաստան, Nice Fortune Industrial LTD –Չինաստան և այլ ընկերությունների հետ:

2021թ-ին ընկերությունում բացվեց նոր՝ պոլիվինիլքլորիդային նյութի (ՊՎՔ) հումքի արտադրությունը [7]:

Ներկայումս ընկերությունը ՀՀ-ում առաջատարն է իր արտադրությամբ, ինչը վկայում է խոշոր հարկատուների շարքում վերջին տարիների կայուն դինամիկայի ապահովումը (նկ. 3):



Նկ. 3. Մալուխի արտադրության հայրենական արտադրության առաջատար ընկերության՝ «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի վճարած հարկերի դինամիկան 2016-2022թթ. [8]

2016թ-ին արդյունավետ կառավարման արդյունքում ընկերությունը 118,669 մլն դրամ ծավալով զբաղեցրել է 861-րդ տեղը 1000 խոշոր հարկատուների շարքում, իսկ 2021թ-ին՝ 217-րդ տեղը, վճարելով 1010,1 մլն դրամ հարկեր:

«ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի հիմնական տնտեսական և ֆինանսական ցուցանիշների մակարդակը 2021թ. դրությամբ վկայում են ընկերության կայուն զարգացման տնտեսական բաղադրիչի արդյունավետ իրականացման մասին: Հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերում» ընկերության վճարած հարկատեսակների մասին պաշտոնական տեղեկատվությունը [8], երկրում գործող հարկադրույքաչափերը և ընկերության պաշտոնական կայքում հասանելի տեղեկատվությունը [7], հաշվարկվել են ընկերության առանցքային ցուցանիշները, որոնք ունեն հետևյալ պատկերը.

- ապրանքաշրջանառություն՝ 4223 մլն դրամ,
- աշխատավարձի ֆոնդ՝ 248,6 մլն դրամ,
- աշխատողների միջին թվաքանակը՝ 70 մարդ,
- միջին աշխատավարձը՝ 3,6 մլն դրամ,

- հարկվող շահույթ՝ 370 մլն դրամ,
- շահութահարկ՝ 66,6 մլն դրամ,
- եկամտային հարկ՝ 54,7 մլն դրամ,
- ԱԱՀ՝ 844,6 մլն դրամ,
- այլ հարկեր և վճարներ՝ 44,2 մլն դրամ:

Ընկերության միջին աշխատավարձի մակարդակը 2021թ. (3,6 մլն դրամ) գերազանցել է երկրի տնտեսության միջին ցուցանիշը (204 048 դրամ) [9] ավելի քան 17,6 անգամ: Այս ցուցանիշը վկայում է ընկերության կայուն զարգացման սոցիալական բաղադրիչի իրականացման բարձր մակարդակի մասին:

Ինչ վերաբերում է կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչին, ապա պետք է ընդգծել ընկերության բարձր կորպորատիվ պատասխանատվությունն այս հիմնարար հարցում: «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ն հետամուտ է միջազգային չափորոշիչներով և ստանդարտներով գործելակերպին՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության քաղաքականության մասով:

Վերջին տարիներին աշխուժություն է նկատվում «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ-ի ար-տադրանքի արտահանման ծավալներում դեպի Ռուսաստանի Դաշնություն: Վերջինիս կայուն դինամիկայի ապահովումը էական նշանակություն ունի ընկերության համար՝ պայմանավորված բիզնեսի ընդլայնման հնարավորություններով:

Հարկ ենք համարում շեշտել այն հանգամանքը, որ Հայաստանը, լինելով տարածաշրջանի պղնձի պաշարներով (1%) և արտադրվող ու արտահանվող ծավալներով ամենահարուստ երկիրը, այդ թվում՝ նաև Թուրքիայի համեմատությամբ, դեռևս շարունակում է ներկրել որոշակի տեսակի մալուխներ հենց Թուրքիայից: Այս երկրում արտադրում են գերակշիռ մասով ներկրվող հումքից միջազգային ստանդարտներին համապատասխան տարբեր տեսակի մալուխներ և բավարարում ոչ միայն ներքին բարձր պահանջարկը, այլև արտահանում տարածաշրջանի երկրներ:

Վերոնշյալ հանգամանքը ցույց է տալիս այն մտահոգիչ փաստը, որ Հայաստանը դեռևս չի օգտագործում իր համեմատական առավելությունները միջազգային շուկայում, չնայած տիրապետում է հումքային տնտեսական անհրաժեշտ ներուժի: Մեր երկիրը կարող է դառնալ մալուխի միջազգային շուկայում մեծ մասնաբաժին ունեցող արտադրող ու արտահանող՝ իր մակրոտնտեսական ազդեցության զգալի բարձրացմամբ:

Պղնձի արտադրության կազմակերպումը Հայաստանում էապես կնպաստի մալուխի շուկայի զարգացմանը և համապատասխան տնտեսական քաղաքականության և մեխանիզմների միջոցով այս ուղղությունը մեծ ներուժ ունի՝ դառնալու արտահանման առաջատար ուղություններից մեկը: Հայաստանն ունի բոլոր իրական նախադրյալները՝ պղնձի սեփական արտադրության պարագայում դառնալու մալուխի միջազգային շուկայում տարածաշրջանի հիմնական արտադրողն

ու արտահանողը՝ իր միկրո և մակրո տնտեսական արդյունքներով: Պղնձի ստացման վերջնական շրջափուլի և նրանից ստացվող արտադրատեսակների շղթայում ավելացված արժեքների մուլտիպլիկատիվ արդյունքը կբարձրացնի ոլորտի դերն ու նշանակությունը ներքին և արտաքին շուկաներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱՄՆ Երկրաբանական ծառայություն, էլեկտրոնային ռեսուրսը հասանելի է 25.08.2022թ. հետևյալ հղմամբ՝ https://www.usgs.gov/centers/national-minerals-information-center/copper-statistics-and-information#mcs
2. World Mining Data 2022, Iron and Ferro-Alloy Metals, Non-Ferrous Metals, Precious Metals, Industrial Minerals, Mineral Fuels, Volume 37 C. Reichl, M. Schatz Minerals Production Vienna, 2022, P. 165, https://www.world-mining-data.info/wmd/downloads/PDF/WMD2022.pdf
3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե, Արտաքին առևտրով ՀՀ-ից արտահանված առավել բարձր մաքսային արժեք ունեցող ապրանքներ (2020-2021թթ.) https://www.petekamutner.am/Content.aspx?itn=csCIExportStatistics
4. «Պղնձաձուլական կլաստերների ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հիմնավորում. Իրավական ակտերի, նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/4357/justification
5. Специализированный журнал «Металлоснабжение и сбыт» https://www.metalinfo.ru/
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022. Արդյունաբերություն, էջ 334, https://www.armstat.am/file/doc/99533298.pdf
7. «ԻՆ-ՎԻ» ՍՊԸ պաշտոնական կայք, http://cable.am/
8. ՀՀ պետական եկամուտների կոմիտե: Հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկեր, https://petekamutner.am/Content.aspx?itn=tsTILists
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2022. Կենսամակարդակ, էջ 124, https://www.armstat.am/file/doc/99533258.pdf

С.М. БАХШЯН, С.А. МКРТЧЯН, А.С. ТАДЕВОСЯН

ПЕРСПЕКТИВЫ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ ОТЕЧЕСТВЕННОГО РЫНКА КАБЕЛЯ НА ОСНОВЕ МЕДИ

В Армении есть все реальные предпосылки стать в случае собственного производства меди основным производителем и экспортером в регионе на международном кабельном рынке с его микро- и макроэкономическими результатами. В статье анализируются текущая ситуация на отечественном кабельном рынке, производственно-хозяйственная деятельность крупнейшей на рынке Армении кабельной компании ООО «ИН-ВИ», перспективы развития рынка.

Ключевые слова: производство меди, производство кабеля, экспортные рынки, устойчивое развитие.

S.M. BAKHSHYAN, S.A. MKRTCHYAN, A.S. TADEVOSYAN

PROSPECTS FOR SUSTAINABLE DEVELOPMENT OF THE DOMESTIC MARKET OF CABLE BASED ON COPPER

Armenia has all the real prerequisites, in case of its own production of its copper to become the region's main producer and exporter in the international cable market with its micro and macro economic results. The current situation of the domestic cable market, the production and economic activity of the largest cable company in the Armenian market, "IN-VI" LLC, and the market development prospects are analyzed.

Keywords: copper production, cable production, export markets, sustainable development.

ՀՏԴ 622.1:502.211

Դ.Ա. ԱՆԴՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Պարենային անվտանգության ապահովումն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Այն իրավական, կազմակերպական, նյութատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համալիր է, որն ուղղված է անհրաժեշտ որակի և բավարար քանակությամբ, առողջության համար անվտանգ, լիարժեք պարենով ապահովմանը, որը հասանելի է հասարակության յուրաքանչյուր անդամի, այդ թվում՝ բնակչության առավել խոցելի հատվածների համար, և կարող է սպառվել նրանց կողմից ցանկացած պահի և ցանկացած իրավիճակում: Հոդվածում դիտարկվում են ՀՀ պարենային անվտանգության խնդիրները:

Առանցքային բառեր. պարենային անվտանգություն, պարենային ինքնաբավություն, պարենային հաշվեկշիռ, պարենային զամբյուղ:

«Պարենային անվտանգությունն ապահովված է այն դեպքում, երբ բոլոր մարդիկ մշտապես ունեն ֆիզիկական և տնտեսական հնարավորություն՝ իրենց նախապատվությունների համաձայն, անհրաժեշտ քանակի ու որակի անվտանգ, սննդարար պարենամթերք ձեռք բերելու, ակտիվ և առողջ կյանք վարելու համար» [1]:

Պարենային հաշվեկշիռը (այսուհետ՝ հաշվեկշիռ) ագրեգացված և վերլուծական ցուցանիշների համակարգ է, որը ներկայացնում է երկրի պարենամթերքի հիմնական տեսակների ձևավորման աղբյուրների, առաջարկի և դրանց օգտագործման ուղղությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն տրված ժամանակահատվածի համար՝ տարեկան կտրվածքով: Հաշվեկշիռը ցույց է տալիս պարենամթերքի շարժն արտադրության պահից մինչև վերջնական օգտա-